

կանից աւելի գանձանակներ պիտի շրջեցնեն: Նրա ծանօթներէից մինը կը շրջեցնէ տեղական հոգաբարձութեան օգտին գանձանակ, մի ուրիշը՝ դպրոցի համար»... Եւ Մարկոսեանը «վճռեց դուրսը մնալ, եկեղեցի չմտնել»:

«Մարկոսեան շարունակ մտածում էր թէ ի՞նչ կ'անէ վաղը, ի՞նչով կը վարձատրէ քահանային: Նրան և տիրացուին ընդունելու համար հարկաւոր է ունենալ առնուազն 1 բուրլի 50 կոպէկ, մինչդեռ նրա գրպանում մնացել է միայն 12 կոպէկ»:

Ու այդ պատական աստիճանաւորը՝ տէրտորը և տիրացուին այցելութենէն խոյս տալու միակ միջոցը կը գտնէ իր դուռը փակել այդ երկիւղած մուրացկաններուն առաջ: Հետեւեալ օրը քահանան «երեք անգամ հրեց դուռը, մի քանի րուպէ սպասեց—բայց բացող չեղաւ... Քահանան ստիպուած եղաւ թողնել ու հեռանալ: Կէս ժամից յետոյ եկան ժամկոչները և ծառաները շնորհաւորելու... Դուռը նոյնպէս փակ գտան»:

Մարկոսեանը կամաւոր բանտարկութեան էր ենթարկել իրան այդ օրը»:

Մենք խորհուրդ պիտի տայինք պ. Սուրվեանին գրականութեան այլ ճիւղերում փորձել իր ոյժերը որովհետեւ նա ի բնէ դեղարուեստագէտի կոչում չունի: Թէ ինչպէս կը գրուին գեղարուեստօրէն առօրեայ հասարակ դէպքերի մասին պարոնը կարող է գաղափար կազմել կարդալով թէկուզ Չեխովի պատմութիւնները... Բեռլեստրիստ պէտք է ծնուել, իսկ ձգտիլ այնպիսին դառնալ—անպտուղ ջանք մըն է...

ԶԱԿԷՆ

Վ. Փափագեանի «Առպեռ» պատմութեան, Թիֆլիս 1903 թ. դինն է 15 կողմ:

Ասպետը՝ իդէալիստն է: Այն՝ որ ամէն զոհողութիւն յանձն կ'առնէ, նոյնիսկ մահուան մէջ հաւատարիմ կը մնայ իր իդէալին:

Համալսարանական ուսուցիչ մը «Կովկասի շքեղ ամարանոցներից մէկում» հիւր է ընտանիքի մը մօտ: Հարուստ տան սրահին մէջ, ամբողջ ընտանիքը հաւաքուած է և մտիկ կ'ընէ ուսուցչի ընտրած հետեւեալ պատմութիւնը՝ զոր կը կարդայ տան մեծ աղջիկը:

«Մի անգամ մի դօրեղ ասպետ—պատմում է միջնադարեան մի վէպ—սիրեց մի իշխանուհու: Թողեց հայր ու մայր, թողեց տուն ու տեղ, հեծաւ իր նժոյգ, առաւ իր նիզակ և եկաւ կանգնեց իր իդէալի ամբողջ տակ»:

«Բայց,—ասում է վէպը—աղջիկը քարասիրտ էր. ամբողջի մօտ դիշեր-ցերեկ կանգնած ասպետին թողեց անուշադիր և չխղճաց անգամ։ Ասենք, ասպետը գութ չէր որ ուզում էր, այլ միայն սէր։ Նիզակը ցցեց ժայռի մէջ, ձին կապեց հսկայ կաղնուն և յամառութեամբ սպասեց ամիսներ ու տարիներ... Աղջիկը նրան չսիրեց... Նա սիրտ չունէր, ոչ ոքի չէր սիրում. ամենքին յուսահատեցրել էր և ետ դարձրել, ամենքին մերժել էր և սրտերը յօշոտել։ Ասպետը լուռ ու յամառ մնաց ամբողջի տակ։ Զիւնն ու քամին, արեւն ու խորշակ նրան անդդուելի դտան, սպառնալիք ու անօթութիւն նրան չընկճեցին... Եւ նա նւիրուեց։ Սիրեց, սիրեց... ու մեռաւ։ Ու երբ մեռում էր, խնդրեց Աստծուց միմիայն մի բան. այնպէս անել որ դիակըն իսկ իդէալից անբաժան մնար։ Եւ Աստուած լսեց նրան. քարացրեց դիակն ու ձին, ասպարն ու նիզակը՝ ամբողջի կողքին։ Այսպէս ասպետը սիրեց և քարացած՝ յաւիտեան մնաց իր իդէալի մօտ։ Սիրեց, սիրեց... ու քարացաւ...»

Այս պատմութեան շուրջը կը սկսին վիճաբանութիւնները։ Ի՞նչ էր միտքը այդ պատմութեան։ Ահա թէ ինչ։

«—Այո,—շարունակեց ուսուցիչը—զրոյցի միտքը այդ սէրը չէ, նա աւելի բարձր բան է ասում։ Նա ակնարկում է այն անյողդողդ ասպետին, որ դիմանալով ցրտի, տաքի, անօթութեան ու հալածանքի, կուռն է վատ հանգամանքների դէմ, չէ ընկճոււմ, չէ յուսահատոււմ և իդէալին է ծառայում մինչև վերջին շունչը... Զրոյցը մի իդէալիստի պատմութիւն է անում»։

Սակայն էականը խօսքը չէ այլ գործը։ Պատմութեան հերոսը՝ այդ «համալսարանական» ուսուցիչը դեռ նոր կը հասկայն այդ ճշմարտութիւնը։ Խոր մտածմունքի մէջ կ'ընկղմի։ Ու երկար խորհրդածութենէ յետոյ կը բացազանչէ. պէտք է ժողովուրդին մէջ ապրիլ «ընկերանալով նրա վշտերին, գործելով նրա յարութեան և փրկութեան համար»... Ու դուք անշուշտ կը մտածէք, որ այդ հերոսը՝ վերջապէս ճշմարտութիւնը իր ձեռքին մէջ բռնելէ, վերջապէս հասնելէ յետոյ ստուգութեան՝ պիտի փորձէ խօսքէն, մտածումէն անցնիլ գործի, պիտի մտնէ ժողովուրդին մէջ, անոր «յարութեան և փրկութեան համար» պիտի աշխատի։ Ո՛չ, պատմութեան այստեղ կը դադրի, ու մենք՝ ինչպէս որ պ. Վահանի շրթներու վրայ խօսքեր ու միայն խօսքեր տեսած էինք, անոր ուղեղին մէջ մտածումներ ու մտածումներ կը գտնենք, ադոնց անոնց իրագործումը տեսնելու պատմութեան շարունակութեան մէջ...

ԶԱԻՆ